*Սեւաստու բաղում անուանի գեղօրայք, չէն եւ փարթամ. գեղ կայր, որ հազար տուն էր. եւ Պինկօլն եւ Էնկէլն իւր գաւառովն ամէնն ճէլալիք աւիրել էին: Մտանէաք ի ներս, մեծ տներ կային որպէս խաներ. եւ երկու, իրեք թօնտիր ամէն տուն, այնպէս մեծ, որ եղ մի կու մտնէր մէջն. բայց անբնակ եւ անմարդ էր: Եւ քաղքէն դուրս Սուրբ Նշան վանքն [2] էր Սէնիքարիմայ թագաւորին շինած. եւ կայ մէջն սուրբ խաչափայտից մասն:*

## ՄԱԼԱԹԻԱ

*Ապա անտի վեց օրն հասաք ի ՄԱԼԱ-ԹԻԱ. ապա բնաւ չէնք չտեսաք, միայն խաներ: Եւ էր խան մի գեղեցիկ Կուրճի խան կոչէն: Եւ Մալաթիա էր պարսպաւոր եւ*

28 *պինկօլն*: — 32 *մտէր*: — 36 *մալաթիյա*: — 39 *մալթայ*:

---

*դերի տարեալ՝ հանդերձիւք զարդարէին եւ ի սուրբ հաւատոյն մերկ արարին: Եւ բազում աւուրս նստեալ յեղր քաղաքին* այրեաց եւ աւերեաց զգեղեցկաշէն քաղաքն եւ զաւանսն, մինչ զի ամայի մնաց Սեբաստիայ թեմովն եւ վիճակովն բազում ժամանակս: *Բայց գոհանամք զԱստուծոյ, զի յետ սակաւ ժամանակի եղեւ կրկին խաղաղութիւն, որ ցրուեալ եւ ճապաղեալ ժողովուրդն հաւաքեցաւ ի թվին ՌՃԳ. ապա զմէկ սոմար հայն ի հազար աւթմանի կերաք. փա՛ռք Աստուծոյ»:*

[2] *Այս շրջանին Ս. Նշանի առաջնորդն էր Անդրէաս արքեպիսկոպոս. Սարգիս դպիր 1615ին կ'օրինակէ ի խնդրոյ «դրասէր Բաղդասարի» Տաթեւացւոյ Քարոզագիրքը «ի Սէբաստիա ի գիւղն որ կոչի Դա՛հուսայ» եւ կը խնդրէ յիշել «եւս առաւել զԱնդրէաս արքեպիսկոպոսն, որ պահեաց զԿարապետ աշակերտն ի քովն ի սուրբ Նշան, կերկրեց ու մխիթարեց, որ մինչեւ աւարտումն գրոյս». Զեռ. Երեւանի Պետ. Թանգարանի, Թ. 973:*